20-ա

Հաստատված է՝
՛՛Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ՛՛-ի մանկավարժական խորհրդի
«--04--»-----07------- 2022թ. նիստում

տնօրեն՝ ________________ Լ.Գ.Մեհրաբյան

ԿԱՐԳ
«Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ» ՍՊԸ բժշկական քոլեջի քննությունների բողոքարկման

1. Ընդհանուր դրույթներ

1.1.Բողոքարկման կարգը ուղղված է ուսանողի կողմից ցուցաբերած գիտելիքի գնահատման (գնահատականի) վերանայմանը:
1.2.Ուսանողը պետք է գիտակցի ստացած գիտելիքի գնահատման անհրաժեշտությունը, որն ուղղված է նրա կողմից ձեռք բերած ունակությունները բացահայտելուն:
1.3.Ուսանողի ունակությունների գնահատումը պետք է լինի առավելագույնս հստակ եւ թափանցիկ:
1.4.Դասավանդողը պարտավոր է ուսանողին տեղեկացնել եւ ծանոթացնել դասընթացին ուղղված գնահատման համակարգին և դրա բաղադրիչներին:
1.5.Դասավանդողը պարտավոր է օբյեկտիվ գնահատել ուսանողին՝ըստ ուսանողի կողմից ցուցաբերած գիտելիքների, կարողությունների ու հմտությունների և ապահովել ուսանողին անհրաժեշտ տեղեկատվությամբ:
1.6.Գնահատման համակարգը պետք է ապահովի ուսանողի գիտելիքների օբյեկտիվ գնահատումը:
1.7.Ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման համար քոլեջում սահմանվում են քննությունների գրավոր և բանավոր ձևեր: Ուսանողը պետք է հստակ տեղեկացված լինի գնահատմանը ուղղված իր իրավունքներին և պարտականություններին
–տեղեկացված լինի գնահատման սկզբունքներին և ձևերին,
–իմանա գնահատման բոլոր բաղադրիչները,
–իմանա յուրաքանչյուր գործոնի ազդեցությունը ընդհանուր գնահատականի վրա:

2. Ուսանողի իրավունքները բողոքարկման ժամանակ

2.1.Ուսանողը իր գնահատականից բավարարված չլինելու դեպքում իրավունք ունի այն բողոքարկելու.

2.1.1.կարող է բողոքարկել անհատական և ինքնուրույն աշխատանքների, միջանկյալ և վերջնական քննությունների գնահատականը:
2.1.2.ՈՒսանողը բողոքարկման իրավունք ունի՝
–եթե գնահատումը ոչ օբյեկտիվ է,
–եթե դասավանդողի կողմից կատարվել է գնահատման անհստակություն,
–գնահատողը չունի բավարար փորձ և հմտություն ուսանողին գնահատելու համար:

3. Բողոքարկման ընթացակարգը

3.1.Բանավոր քննության դեպում.
- բողոքարկման համար բողոքի մասին պետք է հայտնել քննասենյակից առանց դուրս գալու՝ տեղյակ պահելով դասախոսին,
- խնդրին տեղում լուծում չտրվելու դեպքում հայտնել, որ համաձայն չեք գնահատականի հետ և բողոքարկելու եք,
- քննասենյակից դուրս գալուց հետո բողոքարկման մասին հայտնել ուսանողական խորհրդի նախագահին:

3.2. Գրավոր քննության դեպքում.
- Արդյունքների հրապարակման օրվա ընթացքում ստուգող դասախոսին տեղեկացնել գնահատականի հետ անհամաձայնության մասին:
- Հարցի չկարգավորման դեպքում երկօրյա ժամկետում դիմել քոլեջի ուսումնական մասի վարիչին որի կողմից պետք է կազմվի հանձնաժողով, որի կազմում կընդգրկվեն նաև ուսանողական խորհրդի նախագահը և կքննարկվի դիմում բողոքը:

3.3. Բողոքարկման արդյունքում գնահատականը կարող է պահպանվել կամ բարձրանալ, բայց երբեք չի կարող իջնել:
3.4.Հանձնաժողովի կողմից նշանակված գնահատականը վերջնական է: Այն նշանակվում է առանձին ուղեգրի մեջ և կցվում ընդհանուր քննական տեղեկագրին՝ հավելյալ նշում կատարելով ստուգարքային գրքույկում:
3.5. Կազմվում է բողոքարկման հանձնաժողովի արձանագրություն:

4. Բողոքարկման չեղարկումը

4.1.Բողոքարկումը չեղյալ է համարվում եթե՝
–դիմումի մեջ շոշափված են «Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ» ՍՊԸ ուսանողների գիտելիքների ստուգման, ստուգարքների եւ քննությունների անցկացման և գնահատման կանոնակարգի և գնահատման չափանիշների հետ կապված հարցեր:
–դիմումի մեջ ուսանողը պատճառաբանում է իր առողջական խնդիրները:

«Մեհրաբյանի անվան

բժշկական քոլեջ» ՍՊԸ բժշկական քոլեջի

ուսումնական մասի վարիչ՝ /Հ.Ա. Բաբայան /